ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի[1] վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

Նախագծի 1-ին հոդվածի համաձայն՝ եթե ՀՀ քաղաքացին կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող անձն օրենքով նախատեսված հիմքերով ձեռք է բերում սեփականության իրավունք գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ, ապա քաղաքացիությունը կամ հատուկ կացության կարգավիճակը դադարեցվելուց հետո 1 տարվա ընթացքում նա պարտավոր է օտարել այդ հողամասը:

Մինչդեռ, կարող են լինել դեպքեր, երբ քաղաքացիությունը կամ հատուկ կացության կարգավիճակը դադարեցվելուց հետո 1 տարվա ընթացքում անձն օբյեկտիվ պատճառներով չկարողանա օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

Անդրադառնալով ոլորտում առկա միջազգային փորձին՝ հարկ ենք համարում նշել Ղազախստանի Հանրապետության հողային օրենսգրքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումները, որոնցով սահմանվում է, որ այն դեպքում, երբ գյուղատնտեսական նշանակության հողերի սեփականատեր հանդիսացող Ղազախստանի Հանրապետության քաղաքացու քաղաքացիությունը դադարեցվեում է, ապա վերջինիս ընտրությամբ կատարվում են հետևյալ 3 գործողություններից մեկը.

1) 3 ամսվա ընթացքում քաղաքացին օտարում է հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը,

2) հողամասի նկատմամբ քաղաքացու իրավունքը վերածևակերպվում է վարձակալության իրավունքի մինչև 10 տարի ժամկետով

3) տեղական ինքնակառավարման մարմնի համաձայնությամբ հողամասը փոխանցվում է պետությանը սեփականության իրավունքով՝ հողամասի այն գնի հատուցմամբ, որ գնով ձեռք է բերվել պետությունից[2]:

Այսպես, Ղազախստանի Հանրապետությունում բացի օտարման պարտականությունից անձի համար սահմանվել են նաև այլ հնարավորություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծով բացի 1 տարվա ընթացքում հողամասը օտարելու պարտավորությունից սահմանել նաև այլ

---

[1] Այսուհետ՝ Նախագիծ

[2] http://online.zakon.kz/Document/?doc_id=1040583&doc_id2=1040583#pos=42;-26&pos2=967;42

մեխանիզմներ, որոնցից անձը կկարողանա օգտվել այն դեպքում, երբ նախատեսված ժամկետում օբյեկտիվ պատճառներով հնարավոր չլինի օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ